ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 28.11.2019թ. թիվ 75 որոշմամբ

ԵԿԱՄՏԻ ԿՈՐՍՏԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Եկամտի կորստից ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):

1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Ֆինանսական վնասների ապահովագրություն», «Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ՝ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններից)» և «Առողջության ապահովագրություն» դասերի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Եկամտի կորստից ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **Ապահովագրող**՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.

2.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ հիմնարկ.

2.3. **Պայմանագիր**՝ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.

2.4. **Ապահովագրված անձ**՝ Ապահովադրի կողմից Պայմանագրում նշված 20 տարեկանից մինչև 63 տարեկան ֆիզիկական անձ: Ապահովագրված անձը հանդիսանում է **Շահառու**, ով ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում իրավունք ունի ստանալ Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում:

2.5. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրողի կողմից հնարավոր ապահովագրական հատուցման իրականացման առավելագույն չափ.

2.6. **Ապահովագրական սակագին**՝ Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ՝ տոկոսային արտահայտությամբ.

2.7. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման համար վճարվելիք գումար.

2.8. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած իրադարձություն, որի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել Ապահովագրական հատուցում.

2.9. **Դժբախտ պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), ոչ կենսաբանական, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր և (կամ) մշտական կորուստ և (կամ) մահ:

2.10. **Աշխատունակության ժամանակավոր կորուստ**՝ Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա ժամանակավորապես կորցնում է որևէ աշխատանքի նկատմամբ ունակությունները, որոնք վերականգնելի բնույթ ունեն և միաժամանակ ստանում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան բժշկական հաստատությունում և չի ստանում հաշմանդամության որևէ կարգ:

2.11. **Աշխատունակության մշտական կորուստ**՝ Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա կարիք ունի մշտական խնամքի (օգնության կամ հսկողության) կամ կարող է իրականացնել աշխատանքային գործունեության միայն առանձին տեսակներ՝ հատուկ կազմակերպված անհատական պայմաններում և բժշկասոցիալական փորձաքննության մարմինների որոշմամբ ստանում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ:

2.12. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ

Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.

2.12.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

2.12.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի և կորստի չափից:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտն Ապահովագրված անձի գույքային շահերն են՝ կապված գործազրկության, Դժբախտ պատահարի, կրիտիկական հիվանդության կամ հոսպիտալացման հետևանքով Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս հասցնելու հետ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿԵՐ) ԵՎ ԲԱՌԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Սույն Պայմանների համաձայն՝ Ապահովագրական պատահար (ռիսկ) է համարվում Ապահովագրված անձի եկամտի կորուստը հետևյալ իրադարձությունների արդյունքում՝

4.1.1. Գործազրկություն,

4.1.2. Դժբախտ պատահար,

4.1.3. Կրիտիկական հիվանդություն,

4.1.4. Հոսպիտալացում:

4.2. Գործազրկության ապահովագրություն

4.2.1. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում է իրականացվում գործատուի նախաձեռնությամբ Ապահովագրված անձի աշխատանքային պայմանագրի լուծման հետևյալ դեպքերում՝

4.2.1.1. կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում,

4.2.1.2. գործատուի սնանկ ճանաչվելու դեպքում,

4.2.1.3. արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում:

4.2.2. Ապահովագրողն Ապահովագրական հատուցում իրականացնում է միայն այն դեպքում, երբ Ապահովագրված անձի աշխատանքային պայմանագիրը Պայմանագրի գործողության ընթացում անընդմեջ գործել է 90 (իննսուն) օր:

4.2.3. Գործազրկության ապահովագրության դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագիրը լուծվել է՝

4.2.3.1. կողմերի համաձայնությամբ,

4.2.3.2. աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում,

4.2.3.3. աշխատողի նախաձեռնությամբ,

4.2.3.4. աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում,

4.2.3.5. փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով,

4.2.3.6. աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

4.2.3.7. աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,

4.2.3.8. աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում,

4.2.3.9. աշխատողի երկարատև անաշխատունակության հետեւանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով),

4.2.3.10. աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.

4.2.3.11. անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

4.2.3.12. պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով,

4.2.3.13. այն դեպքում, երբ գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից,

4.2.3.14. ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին հակասող ձևով:

4.2.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒՑ այն դեպքում, երբ սպառվել է Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարի չափը կամ մինչև Ապահովագրական գումարի լրանալը Ապահովագրված անձն անցել է այլ աշխատանքի:

4.3. Դժբախտ պատահարից ապահովագրություն

4.3.1. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում է իրականացվում Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած հետևյալ իրադարձությունների դեպքում.

4.3.1.1. աշխատունակության ժամանակավոր կորուստ՝ դժբախտ պատահարի արդյունքում,

4.3.1.2. աշխատունակության մշտական կորուստ՝ դժբախտ պատահարի արդյունքում,

4.3.1.3. մահ՝ դժբախտ պատահարի արդյունքում (այդ թվում՝ մահը, որն առաջացել է Պայմանագրի գործողության ընթացքում շնչահեղձումից՝ շնչուղիներ օտար մարմին ընկնելու, ջրահեղձման, անաֆիլակտիկ շոկի, մարմնի գերսառեցման հետևանքով):

4.3.2. Սույն Պայմանների իմաստով՝ Դժբախտ պատահար է համարվում նաև հանկարծակի սուր թունավորումը՝ քիմիական նյութերով և կենսաբանական ծագման թույներով (այդ թվում՝նաև բոտուլիզմը, գեմատոգենային օստեոմիելիտը): Նշված իրադարձությունները ճանաչվում են Ապահովագրական պատահար այն դեպքում, երբ դրանք ստանալուց կամ զարգանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում Ապահովագրված անձը դիմել է բուժօգնություն ստանալու համար, եթե դրանք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում և Ապահովագրված անձի առողջությանը պատճառել են Պայմանագրով սահմանված վնաս:

4.3.3. Ապահովագրողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ապահովագրական հատուցում նաև Դժբախտ պատահարի տեղի ունենալու օրվանից հետո 1 (մեկ) տարվա ընթացքում՝ ի հայտ եկած տվյալ դժբախտ պատահարի հետևանքների դեպքում՝ անկախ Պայմանագրի գործողության ավարտված լինելու փաստից:

4.3.4. Ապահովագրողն ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ այն պատահարների համար, որոնք հետևանք են՝

4.3.4.1. հիվանդություն (վարակ), վիճակ կամ դրանց բարդությունները, բացառությամբ եթե դրանք հետևանք են Դժբախտ պատահարի,

4.3.4.2. Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի, թմրադեղերի, հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի օգտագործման (անկախ օգտագործման քանակից), եթե վերջինս ուղղակի կապված է պատահարի առաջացման հետ,

4.3.4.3. Դժբախտ պատահարի հետևանքով առողջական խնդիրները չբուժելու, բժշկի խորհրդին չհետևելու կամ ոչ ամբողջությամբ հետևելու, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած առողջական խնդիրները բարդացման, ինչպես նաև դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացման,

4.3.4.4. Տարբեր տեսակի փորձարկումների ժամանակ առաջացած առողջական խնդիրների, մարմնական վնասվածքների կամ մահվան,

4.3.4.5. Ապահովագրված անձի առողջության վատթարացման, գիտակցության կամ մտավոր խանգարումների հետևանքով առաջացած Դժբախտ պատահարի,

4.3.4.6. Քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների անմիջական մասնակցության,

4.3.4.7. Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության,

4.3.4.8. Ապահովադրի, Ապահովագրված անձի կողմից կանխամտածված և (կամ) հակաիրավական (հանցավոր) գործողությունների կատարման կամ մասնակցության, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են Ապահովագրական պատահարի հետ,

4.3.4.9. Ինքնասպանության (Ապահովագրված անձի կողմից ինքնասպանության փորձի) կամ կանխամտածված անդամախեղության կամ Ապահովագրված անձի անմեղսագիտակ վիճակի, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդպիսի իրավիճակի այլ անձի կողմից,

4.3.4.10. Ապահովագրված անձի կողմից իրեն վտանգի ենթարկելու (բացառությամբ ուրիշի կյանքը փրկելու),

4.3.4.11. Ապահովագրված անձի կողմից մրցումներին՝ որպես պրոֆեսիոնալ մարզիկ մասնակցության (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ),

4.3.4.12. Ապահովագրված անձի՝ որպես զինծառայող իր պարտականությունների կատարման,

4.3.4.13. Ապահովագրված անձի կողմից զվարճահարմարանքներին մասնակցության, եթե զվարճահարմարանքի տվյալ տեսակը հակացուցված է Ապահովագրվածին բժշկական հետազոտության արդյունքներով, որն ի հայտ է բերել համապատասխան հիվանդությունը կամ վիճակը,

4.3.4.14. Ապահովագրված անձի կողմից էքստրեմալ սպորտի (ալպինիզմ, վինդսերֆինգ, դայվինգ, պարաշյուտիզմ, սավառնարվեստ, սքեյթբորդինգ, սնոուբորդինգ, մաունթինբայկ, հոլովակասպորտ, ժայռամագլցումը, սպելեոլոգիա, էքստրեմալ տուրիզմ, ձմեռային լող, բեյսջամփինգ և այլն) տեսակներով զբաղվելու (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ),

4.3.4.15. Հղիության կամ ծննդաբերության.

4.3.4.16. Վեներական հիվանդության կամ ձեռքբերվի իմունային անվաբարարության համախտանիշի (ՁԻԱՀ), ՁԻԱՀ-ի Համակցված Համալիրի (ՁՀՀ) կամ մարդու իմունային անբավարարության վարակի (ՄԻԱՎ)՝ անկախ ձեռքբերման ճանապարհներից,

4.3.4.17. Ինսուլտի, էպիլեպտիկ նոպաների կամ ամբողջ մարմնի այլ ջղաձգությունների և այլ անհայտ էթիոլոգիայի ցնցումային համախտանիշի հետևանքով առաջացած պատահարների: Ապահովագրական հատուցում այնուամենայնիվ իրականացվում է, եթե այդպիսի վատթարացումը կամ նոպաներն առաջացել են Պայմանագրով նախատեսված Ապահովագրական պատահարի հետևանքով:

4.3.5. Ապահովագրողն ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ նաև, եթե՝

4.3.5.1. Ապահովագրված անձի մոտ տեղի է ունեցել առողջության վատթարացում, որը հետևանք է բուժման կամ վիրահատական միջամտությունների,

4.3.5.2. Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից կերակրափողի միջոցով կոշտ նյութեր (սնունդ) ընդունելու հետևանքով, բացառությամբ հանկարծակի սուր թունավորումների,

4.3.5.3. Ապահովագրված անձն առանց համապատասխան լիցենզիա/որակավորում ունենալու զբաղվել է լիցենզիա (որակավորում) պահանջող գործունեությամբ, որի ուղղակի հետևանքով առաջ է եկել Դժբախտ պատահարը,

4.3.5.4. Դժբախտ պատահարը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Ապահովագրված անձը ճանապարհորդում կամ անցնում է այն երկրներով, որոնց տարածքում իրականացվում են պատերազմական (նաև քաղաքացիական) կամ այլ ռազմական գործողություններ, բացառությամբ այն դեպքի, երբ Դժբախտ պատահարը տեղի է ունեցել այդ տարածքներ մուտք գործելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում,

4.3.5.5. Ապահովագրված անձը ցանկացած օդային տրանսպորտում ներգրավվել է որպես օդաչու:

4.3.6. Սահմանված ժամկետում Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն 10.8 կետով սահմանված 6 (վեց) ամիս ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ԿԱՐՈՂ Է ՄԵՐԺԵԼ ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3.7. Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼ ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե քննության արդյունքում պարզվի, որ Պայմանագիրը կնքելու պահին և (կամ) Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին հայտնվել են ապահովագրական ռիսկին առնչվող կեղծ տեղեկություններ կամ այդ տեղեկությունները թաքցվել են, ինչպես նաև այն դեպքերում, երբ ապահովագրական հատուցումը նախատեսված չէր իրականացնելու:

4.3.8. Ապահովագրողը որևէ պատասխանատվություն չի կրում բժշկական հաստատությունների կամ մասնավոր արտոնագրված բժիշկների կողմից առաջադրված և (կամ) մատուցված ծառայությունների որակի և ամբողջականության համար:

4.3.9. Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼ ապահովագրական հատուցումը, եթե Պայմանների 10.10 կետի համաձայն դիմել է անկախ փորձագետի և վերջինիս կարծիքով Ապահովադրի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերում զետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությունը, կեղծ կամ թերի է (ներառյալ՝ սխալ կամ ոչ ճիշտ հաշմանդամության կարգի սահմանումը):

4.4. Կրիտիկական հիվանդություններից ապահովագրություն

4.4.1. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում է իրականացվում հետևյալ կրիտիկական հիվանդությունների ախտորոշման դեպքում՝

4.4.1.1. Քաղցկեղի չարորակ հիմնական տեսակներ,
4.4.1.2. Սրտամկանի կաթված (ինֆարկտ),
4.4.1.3. Ուղեղի կաթված (ինսուլտ),
4.4.1.4. Կենսականորեն կարևոր օրգանների փոխպատվաստում ,
4.4.1.5. Խորը այրվածքներ,
4.4.1.6. Կոմա:

4.4.2. **«Քաղցկեղի չարորակ հիմնական տեսակներ»** ասելով՝ հասկացվում է II և III աստիճանների քաղցկեղի չարորակ հիմնական տեսակները, որոնք ունեն հիստոլոգիական հաստատմամբ դրական ախտորոշում և բնորոշվում են չարորակ բջիջների անվերահսկելի աճով և հյուսվածքների ախտահարմամբ:

4.4.3. **«Սրտամկանի կաթված (ինֆարկտ)»** ասելով՝ հասկացվում է սրտամկանի մասնակի մեկուսացում տվյալ օրգանի համապատասխան հատվածների արյան շրջանառության խախտման հետևանքով: Ախտորոշումը պետք է ամրագրված լինի ինֆարկտի համար տիպիկ կրիտերիաների առկայությամբ:

4.4.4. **«Ուղեղի կաթված»** ասելով՝ հասկացվում է արյան թերսնուցմամբ կամ արյունազեղումով պայմանավորված ուղեղի հյուսվածքների մահ, որը բերում է անվերադարձ նյարդաբանական դեֆիցիտի՝ առկա կլինիկական ախտանիշներով: Բացառություն են կազմում տրանզիտ իշեմիկ հարձակումը և ուղեղի հյուսվածքների վնասվածքը կամ արյան անոթների վնասումը:

4.4.5. **«Կենսականորեն կարևոր օրգանների փոխպատվաստում»** ասելով՝ հասկացվում է ոսկրուղեղի, սրտի, երիկամի, լյարդի, թոքի կամ ենթաստամոքսային գեղձի փոխպատվաստում:

4.4.6. **«Խորը այրվածքներ»** ասելով՝ հասկացվում է երրորդ և չորրորդ աստիճանի այրվածքներ, որոնք ծածկում են մարմնի մակերեսի 20% և ավելին:

4.4.7. **«Կոմա»** ասելով՝ հասկացվում է անգիտակից վիճակ, որը բնորոշվում է արտաքին գրգիռների հանդեպ ռեակցիայի թուլացմամբ կամ բացակայությամբ, ռեֆլեքսների մարմամբ մինչև լրիվ անհետանալը, պահանջում է կենսաապահովման սարքերի օգտագործում 96 ժամ և ավելի շարունակվող ժամանակահատվածում և հանգեցնում է մշտական նյարդաբանական դեֆիցիտի՝կլինիկական ախտանիշների պահպանմամբ.

4.4.8. Ապահովագրողն ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ հետևյալ հիվանդությունների, վիճակների և դրանց հետևանքների դեպքում՝

4.4.8.1. մինչև ապահովագրվելն առկա կրիտիկական հիվանդությունների վիճակներ,

4.4.8.2. Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած կրիտիկական հիվանդություններ և վիճակներ,

4.4.8.3. սույն ապահովագրության ռիսկերում չներառված հիվանդություններ և վիճակներ,

4.4.8.4. բնածին արատներ,

4.4.8.5. քրոնիկ հիվանդություններ,

4.4.8.6. ճգնաժամային (կրիտիկական) հիվանդության ախտանիշները կամ վիճակն առաջին անգամ ի հայտ են եկել կամ առաջին անգամ ախտորոշվել են մինչև ապահովագրության պայմանագրի գործողությունից 90 օրացուցային օր անցնելը (սպասման ժամկետ),

4.4.8.7. ապահովագրված անձի կողմից թույլ է տրվել այնպիսի գործողություն, որը դատաքննչական մարմինների կողմից որակվել է մտացածին կամ դիտավորյալ հանցագործություն,

4.4.8.8. ապահովագրված անձի՝ ալկոհոլի, թմրանյութերի և թունանյութերի օգտագործման և դրանց ազդեցության տակ գտնվելու հետևանքով առաջացած հիվանդություններ/վիճակներ,

4.4.8.9. զենքի կամ զինամթերքի հետ անթույլատրելի կամ անզգույշ վարվելու, ռազմական գործողության, խռովության, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, ռադիոակտիվ ճառագայթման, բակ- տերիոլոգիական կամ քիմիական վարակվածության,

4.4.8.10. Ապահովագրված անձի կողմից ինքնասպանություն, ինքնասպանության փորձ կամ կանխամտածված անդամախեղություն կամ Ապահովագրված անձի անմեղսագիտակ վիճակ,

4.4.8.11. հոգեկան հիվանդություններ, շեղումներ, նևրոզներ,

4.4.8.12. դեղորայքի, դեղանյութերի չարաշահում,

4.4.8.13. տրանզիտոր իշեմիկ հարձակումներ, վերտեբրոբազիլյար իշեմիկ հարձակումներ,

4.4.8.14. մաշկի, ձվարանների, շագանակագեղձի չարորակ ուռուցքներ Հոջկինի հիվանդություն, Կապոզիի սարկոմա և այլ՝ ապահովագրության ծածկույթում չներառված օնկոլոգիական հիվանդություններ,

4.4.8.15. ՄԻԱՎ- վարակ, ՁԻԱՀ,

4.4.8.16. շաքարային դիաբետ և զուգակցված սիրտ անոթային համակարգի հիվանդություններ,

4.4.8.17. պետական պատվերի ծրագրերում ներառված հիվանդություններ/վիճակներ,

4.4.8.18. ցանկացած տեսակի բնածին և ձեռքբերովի հիվանդություններ, որոնք պահանջում են դինամիկ հսկողություն և (կամ) պահպանողական բուժում

4.4.8.19. ապահովագրված անձի կողմից պրոֆեսիոնալ կամ վտանգավոր սպորտաձևերով կամ հոբբիներով կանոնավոր և երկարատև զբաղվելը

4.4.8.20. պատերազմ կամ պատերազմական գործողություններ (անկախ այն հանգամանքից պատերազմ հայտարարվել է, թե ոչ)

4.4.8.21. ահաբեկչական գործողություն:

4.5. Հոսպիտալացման ռիսկից ապահովագրություն

4.5.1. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում է իրականացվում անհետաձգելի և սուր առողջական վիճակի բուժման նպատակով անընդմեջ 7 և ավելի օր հոսպիտալացման դեպքում, որը հետևանք չէ Դժբախտ պատահարի կամ Կրիտիկական հիվանդության:

4.5.2. Ապահովագրողն ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ հետևյալ հիվանդությունների, վիճակների և դրանց հետևանքների դեպքում՝

4.5.2.1. մինչև ապահովագրվելն առկա հիվանդություններ և վիճակներ,

4.5.2.2. վերարտադրողական ֆունկցիայի խանգարում,

4.5.2.3. հղիության կամ ծննդաբերության բարդ դեպքեր,

4.5.2.4. վերականգնողական կենտրոնում, առողջարանում, հանգստյան տանը բուժում,

4.5.2.5. կոսմետիկ կամ հոգեբանական վիճակը բարելավելու նպատակով բուժում,

4.5.2.6. քրոնիկ հիվանդություններ,

4.5.2.7. հոգեկան հիվանդություններ, շեղումներ, նևրոզներ,

4.5.2.8. ՄԻԱՎ վարակ, ՁԻԱՀ և այլ հաստատված իմունաանբավարարության վիճակներ, B և C վիրուսային հեպատիտներ,

4.5.2.9. տուբերկուլյոզ,

4.5.2.10. օնիխոմիկոզներ, պսորիազ, էկզեմա,

4.5.2.11. համակարգային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, դերմատոմիոզիտ և այլ շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, հանգուցավոր պերիարտերիիտ, հեմոռագիկ վասկուլիտ և այլ համակարգային վասկուլիտներ, քրոնիկական արթրոզներ,

4.5.2.12. արտահայտված էնդոկրինոպաթիաներ, շաքարային դիաբետ (I և II տիպ) և դրանց հետ զուգակցված ցանկացած հիվանդություն,

4.5.2.13. քրոնիկական երիկամային անբավարարություն (հեմոդիալիզ),

4.5.2.14. բուժման և հետազոտման եղանակներ, որոնց կիրառման վերաբերյալ չկան գիտական, ստույգ հեռահար տվյալներ՝ ֆիտոթերապիա, գոմեոպաթիա, տզրուկաբուժություն, աուրիկուլոդիագնոստիկա, իրիդոդիագնոստիկա, ակուպունկտուրային դիագնոստիկա, պուլսոդիագնոստիկա,

4.5.2.15. Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի, թմրադեղերի, հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի օգտագործում (անկախ օգտագործման քանակից), եթե վերջինս ուղղակի կապված է պատահարի առաջացման հետ,

4.5.2.16. քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների անմիջական մասնակցությունն,

4.5.2.17. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցություն,

4.5.2.18. Ապահովագրված անձի կողմից կանխամտածված և (կամ) հակահիրավական (հանցավոր) գործողությունների կատարում կամ մասնակցություն, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են Ապահովագրական պատահարի հետ,

4.5.2.19. ինքնասպանություն, ինքնասպանության փորձ կամ կանխամտածված անդամախեղություն կամ Ապահովագրված անձի անմեղսագիտակ վիճակ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդպիսի իրավիճակի այլ անձի կողմից,

4.5.2.20. Ապահովագրված անձի կողմից իրեն վտանգի ենթարկելը (բացառությամբ ուրիշի կյանքը փրկելու),

4.5.2.21. Ապահովագրված անձի կողմից մրցումներին՝ որպես պրոֆեսիոնալ մարզիկ մասնակցություն,

4.5.2.22. Ապահովագրված անձի՝ որպես զինծառայող իր պարտականությունների կատարում,

4.5.2.23. Ապահովագրված անձի կողմից զվարճահարմարանքներին մասնակցություն, որն ի հայտ է բերել համապատասխան հիվանդությունը կամ վիճակը,

4.5.2.24. Ապահովագրված անձի կողմից էքստրեմալ սպորտի (ալպինիզմ, վինդսերֆինգ, դայվինգ, պարաշյուտիզմ, սավառնարվեստ, սքեյթբորդինգ, սնոուբորդինգ, մաունթինբայկ,

հոլովակասպորտ, ժայռամագլցումը, սպելեոլոգիա, էքստրեմալ տուրիզմ, ձմեռային լող, բեյսջամփինգ և այլն) տեսակներով զբաղվելը,

4.5.2.25. պետական պատվերի ծրագրում ընդգրկված հիվանդությունների ախտորոշում և բուժում:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) միջև ընդհանուր համաձայնությամբ:

5.2. Ապահովագրական գումարը նվազում է իրականացված ապահովագրական հատուցման չափով:

5.3. Ապահովադիրը կարող է հանդես գալ Ապահովագրական գումարը մեծացնելու պահանջով՝ վճարելով համապատասխան չափով Ապահովագրավճար:

5.4. Պայմանագրով Ապահովագրական գումարը կարող է սահմանվել բոլոր ռիսկերի համար ընդհանուր գումարի տեսքով կամ Պայմանների 4.1 կետով սահմանված յուրաքանչյուր ռիսկի համար առանձին գումարի տեսքով:

5.5. Պայմանագրով կարող է սահմանվել յուրաքանչյուր ապահովագրական հատուցման իրականացման կամ առանձին տեսակի վնասվածքների համար ապահովագրական հատուցման իրականացման առավելագույն շեմ մեկ ապահովագրական պատահարի համար:

5.6. Վճարվող ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող Ապահովագրական գումարի չափը:

5.7. *Գործազրկության ապահովագրության դեպքում* Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է Ապահովագրված անձի աշխատանքային պայմանագրի լուծմանը հաջորդող 1 (մեկ) տարվա համար, վերջին տարվա միջին ամսական աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուր ամիս (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

5.8. *Դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում* Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է հետևյալ չափերով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով)՝

5.8.1. Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում՝ բուժման յուրաքանչյուր օրվա համար Ապահովագրական գումարի 0,4%-ի չափով, բայց ոչ ավել քան 90 օր,

5.8.2. Ապահովագրված անձի 1-ին խմբի հաշմանդամության ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100 %-ի չափով,

5.8.3. Ապահովագրված անձի 2-րդ խմբի հաշմանդամության ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75 %-ի չափով,

5.8.4. Ապահովագրված անձի 3-րդ խմբի հաշմանդամության ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50 %-ի չափով,

5.8.5. Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100 %-ի չափով,

5.8.6. Եթե Ապահովագրված անձի հետ մեկ Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Պայմանների 4.3.1.1 ենթակետով սահմանված դեպքին հաջորդել է տվյալ առողջական խնդրի հետևանքով հաշմանդամության խումբ/կարգավիճակ ստանալը կամ արդեն առկա հաշմանդամության խմբի/կարգի փոփոխությունը, ապա հաշմանդամության խմբի/կարգավիճակի համար հատուցում իրականացնելիս հաշմանդամության համար իրականացվելիք ապահովագրական հատուցման չափից հաշվանցվում է արդեն իսկ տվյալ Ապահովագրական պատահարի համար իրականացված ապահովագրական հատուցման չափով (վճարվում է դրական տարբերությունը):

5.8.7. Եթե Ապահովագրված անձի հետ մեկ Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Պայմանների 4.3.1.1 և (կամ) 4.3.1.2 ենթակետերով սահմանված դեպքերին հաջորդել է Ապահովագրված անձի մահը, ապա վերջինիս համար իրականացվող հատուցման չափից նվազեցվում են տվյալ Ապահովագրական պատահարի համար արդեն իսկ իրականացված ապահովագրական հատուցումները:

5.8.8. *Կրիտիկական հիվանդություններից ապահովագրության դեպքում* Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է միանվագ՝ Ապահովագրական գումարի չափով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

5.8.9. *Հոսպիտալացման ռիսկից ապահովագրության դեպքում* հատուցվում է ստացիոնար բուժման 7-րդ օրվան հաջորդող յուրաքանչյուր օրվա համար 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարի չափը (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

ԲԱԺԻՆ 6.ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

6.1. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

6.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

6.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել միանվագ (միանգամյա վճարումով) կամ մաս-մաս՝ Պայմանագրով սահմանված կարգով:

6.4. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել կանխիկ եղանակով Ապահովագրողի դրամարկղ կամ ապահովագրական միջնորդին (գործակալին կամ բրոքերին) կամ փոխանցվել Ապահովագրողի համապատասխան բանկային հաշվին:

6.5. Եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական Ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված Ապահովագրավճարի չափը:

6.6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՑ, եթե Ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին Ապահովադիրն Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ:

6.7. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական Ապահովագրավճարը, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ Ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.8. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել միանվագ կամ հերթական Ապահովագրավճարը, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ 5 (ՀԻՆԳ) ՕՐ ՀԵՏՈ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: Այս դեպքում Ապահովադրի կողմից Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ

7.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովագրված անձին տրամադրել ապահովագրական հատուցում:

7.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

7.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.

7.3.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,

7.3.2. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,

7.3.3. իրեն տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,

7.3.4. այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:

7.4. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով՝ փոխադարձ համաձայնությամբ:

7.5. Ապահովագրական տարածք է համարվում Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

7.6. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.7. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի և Ապահովագրված անձի համար:

7.8. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և դրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

8.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),

8.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,

8.1.3. Պայմանագրում նշել անձի (Շահառու), ով Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրավունք կունենա ստանալ ապահովագրական հատուցում,

8.1.4. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը,

8.1.5. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

8.2. ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԸ) ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

8.2.1. Ապահովագրողի պահանջով վերջինիս ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԵԼ ապահովագրական ռիսկի աստիճանը որոշող հավաստի և ճշգրիտ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

8.2.2. Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ այլ ապահովագրության պայմանագրով կամ վկայագրով նույն վնասը ապահովագրված առկա այլ ապահովագրության պայմանագրերի կամ վկայագրերի մասին,

8.2.3. Պայմանագրով ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ և ԺԱՄԿԵՏ(ՆԵՐ)ՈՒՄ ՎՃԱՐԵԼ Ապահովագրավճարը,

8.2.4. Պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ և ԺԱՄԿԵՏ(ՆԵՐ)ՈՒՄ պատահարի մասին ՀԱՅՏՆԵԼ Ապահովագրողին,

8.2.5. Պայմանների մասին ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրված անձին,

8.2.6. անցնել կրկնակի բժշկական քննություն և (կամ) զննում Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում՝ Ապահովագրողի պահանջով և նրա հաշվին,

8.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

8.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը,

8.3.2. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,

8.3.3. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,

8.3.4. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած պատահարի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,

8.3.5. Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի

հանգամանքներ, որի պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ,

8.3.6. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի գումարի հետ,

8.3.7. պահանջել Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի չափի փոփոխություն, Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում,

8.3.8. ծանոթանալ Ապահովագրված անձի բժշկական և այլ փաստաթղթերին, որտեղ արտացոլված են պատահարի պատճառները, Ապահովագրված անձի ֆիզիկական ու հոգեկան վիճակը, ախտորոշումը, բուժման ընթացքը և դրա արդյունքների կանխատեսումը, ինչպես նաև նշված տեղեկատվությունն օգտագործել Պայմանագրի հետագա սպասարկման, Ապահովագրական հատուցման տրամադրման (մերժման) վերաբերյալ որոշման կայացման համար: Դժբախտ պատահարի և դրա հետևանքների միջև պատճառա-հետևանքային կապը պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով իր հաշվին նշանակել Ապահովագրված անձի կրկնակի բժշկական քննություն և (կամ) զննում,

8.3.9. ստուգել Ապահովագրված անձին մատուցվող բժշկական ծառայությունների համապատասխանությունը, ծառայությունների տրամադրման և Պայմանագրի այլ դրույթների կատարման ժամկետները, ինչպես նաև անցկացնել տրամադրված ծառայությունների որակի փորձաքննություն:

8.3.10. մերժել հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով:

8.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

8.4.1. Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին և տրամադրել դրա օրինակը.

8.4.2. Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

8.4.3. Ապահովադրի պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

8.4.4. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում,

8.5. Կողմերը և Ապահովագրված անձը ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

8.6. Ապահովադիրն (Ապահովագրված անձը) ու Ապահովագրողն ունեն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 9. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9.1. ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ ԿԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ.

9.1.1. ՊԱՏԱՀԱՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ 2 (ԵՐԿՈՒ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ դրա մասին Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ ՊԱՏԱՀԱՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 30 (ԵՐԵՍՈՒՆ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ այդ մասին գրավոր՝ ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելով, տեղեկացնել Ապահովագրողին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

9.1.2. դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված անձի մահվան դեպքում՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՄԱՀՎԱՆԻՑ ՀԵՏՈ 30 (ԵՐԵՍՈՒՆ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ այդ մասին տեղեկացնել ապահովագրողին:

9.1.3. Պայմանների 9.1.1 և 9.1.2 ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ապացուցում է տեղեկացնելու անհնարինությունը: Նշված ժամկետը հաշվարկվում է այն օրվանից, երբ Ապահովադրին, Ապահովագրված անձին հայտնի է դարձել պատահարի հետևանքների վրա հասնելու մասին:

9.1.4. Պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ համապատասխան իրավասու մարմնին և ստանալ պատահարը լինելու փաստը հավաստող և հանգամանքները նկարագրող փաստաթղթեր, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադրին (Ապահովագրված անձին) գրավոր փաստաթղթով ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց,

9.1.5. հնարավորության սահմաններում իրականացնել գործողություններ՝ պատահարի մասնակից այլ կողմերի և վկաների (առկայության դեպքում) ինքնությունը (անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար և այլն) պարզելու նպատակով,

9.1.6. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը,

9.2. Պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է՝

9.2.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջով տրամադրել խորհրդատվություն հետագա իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,

9.2.2. Ապահովադրից (Ապահովագրված անձից) ապահովագրական հատուցման դիմում ստանալուց հետո վերջինիս տեղեկացնել բացակայող, բայց ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին,

9.2.3. իրականացնել ապահովագրական հատուցում սահմանված կարգով և ժամկետում:

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

10.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ՝

10.1.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից գրավոր դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,

10.1.2. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),

10.1.3. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթուղթը,

10.2. *Գործազրկության դեպքում* Պայմանների 10.1 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև Ապահովագրված անձի աշխատանքային պայմանագրի և աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ փաստաթղթի բնօրինակները կամ գործատուի կողմից հաստատված կրկնօրինակները:

10.3. *Դժբախտ պատահարի դեպքում* Պայմանների 10.1 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև՝

10.3.1. Ապահովագրված անձի օրգանիզմում ալկոհոլի, թմրադեղերի և հոգեմետ այլ նյութերի առկայության մասին փաստաթուղթ՝ հաստատված իրավասու մարմնի կողմից (Ապահովագրողի պահանջով),

10.3.2. արտադրությունում արտադրական վնասվածք (տրավմա) ստանալու Դժբախտ պատահարի վերաբերյալ ակտ, եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել արտադրական վնասվածքի հետևանքով,

10.3.3. Դժբախտ պատահարում մեղավոր կողմի առկայության դեպքում՝ մեղավորի վերաբերյալ տվյալներ,

10.3.4. Իրավասու մարմնի կողմից Դժբախտ պատահարի արձանագրությունը և տվյալ պատահարին առնչվող այլ փաստաթղթերը (Ապահովագրողի պահանջով),

10.3.5. Դժբախտ պատահարի արդյունքում առաջացած աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում՝ բժշկական տեղեկանք և (կամ) խորհրդատվության թերթիկ և (կամ) քաղվածք ամբուլատոր քարտից և (կամ) էպիկրիզ,

10.3.6. Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի հաշմանդամության խումբ (կարգավիճակ) ստանալու դեպքում՝ բժշկասոցիալական փորձաքննական մարմինների (ԲՍՖ) կամ սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից Ապահովագրված անձին հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ որոշումը,

10.3.7. *Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում*

10.3.7.1. Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ նոտարական գրասենյակի կողմից հաստատված պատճենը,

10.3.7.2. Ապահովագրված անձի մահվան պատճառների վերաբերյալ բժշկական տեղեկանքը/վկայականը (Ապահովագրողի պահանջով),

10.3.7.3. նոտարի կողմից հաստատված ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթ:

10.4. *Կրիտիկական հիվանդության դեպքում* Պայմանների 10.1 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև՝

10.4.1. բժշկական հաստատության կողմից տրամադրված փաստաթղթեր, որոնք պարունակում են հիվանդության վերաբերյալ մասնագետների (սրտաբան, նյարդաբաի, նեֆրոլոգ, ուռուցքաբան, կարդիովիրաբույժ և այլն) եզրակացություններ կամ Ապահովագրված անձին առաջին խմբի հաշմանդամություն նշանակելու վերաբերյալ եզրակացություն,

10.4.2. Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

10.5. *Հոսպիտալացման դեպքում* Պայմանների 10.1 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև

10.5.1. բժշկական հաստատության կողմից պատշաճ վավերացմամբ տրված տեղեկանք, որը տեղեկություններ է պարունակում տրամադրված բուժօգնության ծավալների և ծախսերի վերաբերյալ,

10.5.2. քաղվածք ամբուլատոր և (կամ) ստացիոնար քարտից, տեղափոխման, դուրս գրման էպիկրիզ,

10.5.3. խորհրդատվական եզրակացություն,

10.5.4. լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների պատասխան(ներ),

10.5.5. հաշիվ-ապրանքագրեր և դրամարկղային կտրոն(ներ) կամ մուտքի օրդեր(ներ),

10.5.6. Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

10.6. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովագրված անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված Ապահովագրական պատահարի առաջացման հետ:

10.7. ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԸ) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:

10.8. ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԸ) ՊԱՐՏԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 6 (ՎԵՑ) ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

10.9. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:

10.10. Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 3 (երեք) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրի կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ավել քան 2 (երկու) ամիս ժամկետով կասեցնել դիմումի ընթացքը և դիմել անկախ փորձագետի՝ Ապահովադրի կողմից ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ բժշկական փաստաթղթերի, հաշմանդամության կարգի նշանակման որոշումների) արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու համար:

10.11. Ապահովագրողը, Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո դա առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին, Ապահովագրված անձին, իսկ 10.13 կետով սահմանված դեպքում՝ Ապահովագրված անձի ժառանգներին:

10.12. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:

10.13. Ապահովագրված անձի մահվան դեպքում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքն անցնում է Շահառուի օրենքով ճանաչված ժառանգներին:

10.14. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովագրողի կողմից կանխիկ կամ Ապահովագրված անձին բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

10.15. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է ամիջապես ներկայացնի Ապահովագրողին:

10.16. Դժբախտ պատահարի և (կամ) դրա առաջացրած հետևանքների միջև պատճառահետևանքային կապը պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով Ապահովագրողը կարող է իր հաշվին նշանակել Ապահովագրված անձի բժշկական քննություն և (կամ) զննում, իսկ Ապահովագրված անձը պարտավոր է տվյալ քննությունն անցնել Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում, որից Ապահովագրված անձի հրաժարվելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

ԲԱԺԻՆ 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ

11.1. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է.

11.1.1. Կողմերի փոխհամաձայնեցմամբ,

11.1.2. եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,

11.1.3. եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները,

11.1.4. եթե Ապահովագրված անձը մահացել է,

11.1.5. ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

11.2. Պայմանների 11.1.2 ենթակետով նախատեսված դեպքում Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին և Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, Պայմանների 11.1.2 ենթակետով նախատեսված հիմքով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից սկսված, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:

11.3. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին վերադարձվում է Ապահովագրավճարն ամբողջությամբ՝ բացառությամբ Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված դեպքերի:

11.4. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:

11.5. Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում՝ Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը: Այս դեպքում Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի համար հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 70 (յոթանասուն) տոկոսը՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 70 (յոթանասուն) տոկոս / Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր), եթե Պայմանագրով այլ բան նախատեսված:

11.6. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված Ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11.7. Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վերջինիս վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման պահանջն Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել (մինչև ապահովագրական պահանջի կարգավորումը) կամ ստացել է ապահովագրական հատուցում, եթե Կողմերի այլ համաձայնություն առկա չէ:

11.8. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե Կողմերից մեկը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում: Այս դեպքում վճարված Ապահովագրավճարն Ապահովադրին ենթակա չէ վերադարձման, եթե խախտումը թույլ է տվել Ապահովադիրը:

11.9. Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

11.10. Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պայմանագրով, սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 12. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

12.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրված անձին պատճառված վնասից բխող նրա պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

12.2. Ապահովագրված անձը պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:

12.3. Եթե Ապահովագրված անձը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի, Ապահովագրված անձի մեղքով,

ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովագրված անձից վերադարձնել ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

13.1. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:

13.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:

13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

14.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի, Ապահովագրված անձի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:

15.1. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: